

12540

ՃԱՂԱՐԲԵԳԵԱՆ

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆ

339

Չ-18

XVI 81

2010

AB 2001

Մի Ժամանակի զբոս
Եւ ի Բաղնիկ Միջ-Սարգսի

ՀԱՐԱՏՈՒԹԵԱՆ

ԱԻԵՏԱՐԱՆ

Յ. Ճաղարեղեան -

Բ

Ձ Ո Ւ Ձ Ի

Տպարան Ա. Մ. Մանուկ-Յակոբեանցի


Типографія А. М. Мугдусіакопова.

1899

339
Է-18

ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ
Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Յ. Ճաղարքէզեան



Հ Ո Ւ Հ Ի

Տպարան Ա. Մ. Մահաթի-Յակոբեանցի
Типография А. М. Мугдусіакопова.
1899

7459

Дозволено Цензурою. Тифлисъ, 1 юля 1899 г.

ՀԱՐՍՏՈՒԹԵԸՆ ԸՆԵՏԸՐԸՆ

I

Ահա եւ սերմանահան
սերմանել. եւ ի սերմանելն իւ-
րում էր որ անկաւ առ ճանա-
պարհաւ. եւ եկն թռչուն երկ-
նից եւ եկեր զնա:

Եւ այլն անկաւ յապառա-
ժի, ուր ոչ գոյր հող քազում.
եւ վաղվաղակի քոսաւ առ ի
չգոյէ հիւթոյ երկրին:

Ի ծագել արեւու տապա-
ցաւ, եւ զի ոչ գոյին արմատք՝
չորացաւ:

Եւ այլն անկաւ ի մէջ
փշոց. եւ ելին փուշքն եւ հեղ-
ծուցին զնա:

Եւ այլն անկաւ յերկիր
քարի, եւ տայր պտոտ. էր որ
հարկւրատր, եւ էր որ վաթ-
սնատր, եւ էր որ երեսնատր:

Որ ունիցի ականջս լսե-
լոյ, լուիցէ:

Հարստութիւնը մի երկսայրի սուր է:
Նայելով թէ ինչ գործադրութիւն է գրու-
նում, նա կարող է լինել օգտակար, կա-
րող է լինել և վնասակար. կարող է ու-
նենալ լաւ կամ վատ, բարի կամ չար հե-
տեանքներ: Ընդհանրապէս հարստու-
թիւնը բարքերն ապականում, փչացնում

է: Ուշադրութեան արժանի է սակայն, որ
բարոյախօսների յանդիմանութեան գլխա-
ւոր առարկայ ո՛չ թէ հարստութիւնն է,
այլ հարուստը: Եւ այդ հասկանալի է.
հարստութիւնը պատասխանատու չէ այն
հետեանքների համար, որ ինքն է ունե-
նում: Պատասխանատուն այն անձն է,
որի ձեռքին լոկ գործիք են միլիօնները:
Եւ լաւ, նպատակայարմար գործադրու-
թեամբ, կարելի է հարստութիւնը դար-
ձնել մէկն այն գօրեղ գործօններից, որոնք
կոչուած են մարդկային թշուառութիւնը
վերացնելու:

Իսկ միլիօնները հետզհետէ աւելի և
աւելի են մեծանում ու հսկայական չա-
փեր ընդունում: Ներկայումս ամբողջ եր-
կրագնդի վրայ 703 միլիարդ ռուբլի հա-
րըստութիւն են հաշուում:*) Դրանից 513

*) Н. Анжуль. Вѣстникъ Европы. 1899 Апрель

միլիարդը Եւրոպայի բաժինն է: Եւրոպական տէրութիւնների մէջ այդ կողմից առաջին տեղը բռնում է Մեծ Բրիտանիան, որի հարստութիւնն է 118 միլիարդ:

Նշանաւոր տեղ են բռնում և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, ուր երկրի հարստութիւնը 163 միլիարդի է հասնում: Հաշուել են, որ եթէ երկրիս ամբողջ հարստութիւնը ռուսական արծաթ ռուբլիների վերածենք և իրար վրայ դարսենք, կստանանք մի սիւն, որի բարձրութիւնը հինգ անգամ աւելի կլինի, քան երկրի ու լուսնի միջև եղած տարածութիւնը:

Այդպիսի սոսկալի չափերի հասնող հարստութիւնը սակայն, ինչպէս յայտնի է, բաժանուած է անհաւասար կերպով. և նրա մեծագոյն մասը կենտրոնացած է սակաւաթիւ ձեռքերում: Այս բախտա-

ւորների մէջ ութսնական թուականներին հաշուում էին եօթն հարիւր միլիօնատէր, այսինքն այնպիսի անձինք, որոնց հարըստութիւնը տասը միլիօն ռուբլուց աւելի է: Այդպիսի միլիօնատէրեր Անգլիայում հաշուում են 200, Միացեալ Նահանգներում՝ 100, Գերմանիայում և Աւստրիայում՝ 100, Փրանսիայում՝ 75, Ռուսիայում՝ 50: Բայց հարստութեան այդ կենտրոնացումն աւելի խիստ, աւելի զգալի կերպով տեղի է ունեցել Միացեալ Նահանգներում: Այնտեղ երկրի հարստութեան կէսը քառասուն հազար ընտանիքի սեպհականութիւն է, երեք քառորդն՝ երկու հարիւր լիստոն հազար ընտանիքի: Ուրեմն առիւծի բաժինը ժողովրդի ամենաչնչին մասի ձեռքին է:

Հարստութեան այդ անհաւասար բաժանումից հազարաւոր վնասներ են ծա-

գում: Խիստ զգալի է մանաւանդ մի երեւոյթ. ուր կենտրոնանում, լճանում է հարստութիւնը, այնտեղ սոսկալի քայլերով առաջ է գնում և բարքերի ապականութիւնը: Այդ երեւոյթն իւր գլխաւոր կողմերով հրաշալի կերպով պատկերել է Էմիլ Զոլան իւր վերջին վէպի՝ «Փարիզի» մէջ: Տաղանդաւոր վիպագրի ստեղծագործող վրձինը պարզ գոյներով և վերին աստիճանի ճշտութեամբ նկարել է քսաներորդ դարու սեամքին կանգնած հասարակութեան կեանքը, որի վրայ վիթխարի վիշապների պէս ընկել են աղքատութիւնն ու հարստութիւնը և սոսկալի տանջանքներ տալով նրան, ճգնում են ապականել ու խեղդել այն:

Ինչպէս անել ուրեմն, որ այդ ծայրերը տանելի կերպարանք ստանան. ինչպէս գործադրել հարստութիւնը, որ դա

բարերար ներգործութիւն և հետևանքներ ունենայ:

Այդ հարցին պատասխանում է «Հարստութիւն և մարդասիրութեան լաւագոյն ասպարէզ», գիրքը, որի հեղինակն է Ամերիկայի միլիօնատէրերից մէկը՝ Կերնեջին: «Հարստութիւն և մարդասիրութեան լաւագոյն ասպարէզ», գիրքը ռուսերէն թարգմանութեամբ, եթէ չեմ սխալոււմ, լոյս չի տեսել: Բայց նրա և նրա առթիւ եղած նշանաւոր քննութիւնների հետ ես կժանօթացնեմ իմ ընթերցողին՝ օգտուելով այն տեղեկութիւններից, որ հաղորդում է պրօֆ. Ի. Եանժուլ:*)

*) Вѣстникъ Европы, 1899. № 4.

II

Կերնեջին ծնունել է Անգլիայում և ապա գաղթել է Միացեալ Նահանգները: Այստեղ նա՝ մի աղքատ և անօգնական տղայ, ծառայութեան է մտնում մի երկաթի գործարան: Գործարանում գաղտագողի գրքեր է կարդում, լրացնում է իւր ուսումը: Գործում է շարունակ, մեծ եռանդով: Բախտն էլ ժպտում է եռանդոտ աշխատաւորին. սա հարստանում է: Պա մէկն է այն մարդկանցից, որոնց եանկիները „Self-made man“, այսինքն մի մարդ, որ ինքն է իրեն առաջացրել, ստեղծել:

Կերնեջին ներկայումս մէկն է այն եօթանասուն միլիօնատէրերից, որոնց մասին վերւում խօսք եղաւ: Նա մի քանի խոշոր երկաթի գործարաններ ունի Պենսիլվանիայում: Իւր հետաքրքիր գրքի մէջ նա նախ կանգ է առնում այն ահագին լեղափոխութեան նշանակութեան վրայ, որ տեղի ունեցաւ մարդկային կեանքում այս անցնող դարում: Նա յիշում է անցած ժամանակները, երբ չկար խոշոր հարստութիւն, բայց միւսնոյն ժամանակ չկար և ներկայիս ծայրայեղ աղքատութիւնը: Նա շրջել է վայրենիների մէջ, որոնց կեանքը նման է նախնական մարդու կեանքին, և նկատել է, որ նրանց առաջնորդի խրճիթը առանձին կերպով չի տարբերւում յետին չքաւորի խրճիթից: Ժամանակակից հասարակական կազմակերպութիւնը դրա կատարեալ հակապատկերն

է ներկայացնում: Աղքատն ու հարուստը
բաժանուած են իրարից ահագին անդուն-
դով. և այն ինչ առաջինն ուտելու հաց
անգամ չունի, երկրորդը չգիտէ, թէ ուր
տեղաւորէ, ինչ անէ իւր առասպելական
թուերի հասնող հարստութիւնը: Ամբողջ
Ժողովուրդը՝ կարծես՝ երկու դասակարգի է
բաժանուած, որոնք իրար դէմ՝ ասես թէ
զինուած են: Սակայն ընդհանուր բարո-
ւութեան տեսակէտից, ասում է Կերնե-
ջին, ցանկալի էր, որ այնքան դժուարաւ
ձեռք բերուող հարստութիւնը մարդկայնցը
կապէր եղբայրական կապով, այլ ո՛չ թէ
թշնամական բանակների բաժանէր:

Ներկայումս, շարունակում է Կերնե-
ջին, մարդիկ հարստութիւնը գործադրում
են հետևեալ կերպով.

Նախ՝ ժառանգութիւն են թողնում
որդոց համար:

Երկրորդ՝ մեռնելիս կտակում են բա-
րի և հանրօգուտ նպատակներով.

Երրորդ՝ կենդանութեան ժամանակ
գործադրում են բարի գործերի վրայ:

Տեսնենք, թէ հեղինակը ի՞նչպէս է
նայում հարստութեան գործադրութեան
յիշեալ եղանակներին:

Առաջին միջոցը, այսինքն որդոց ժա-
ռանգութիւն թողնելը, նա համարում է
ամենաանկատարը: Նա ծաղրում է Ան-
գլիայում գոյութիւն ունեցող անգլան-
կութեան իրաւունքը: Նրա կարծիքով՝ այդ
իրաւունքը բոլորովին չի խանգարում, որ
ժառանգաբար ստացած կալուածներն
օտար ձեռք անցնեն, բայց նպաստում է Ան-
գլիական արխտոկրատիայի ալլասեռման:
Ընդհանրապէս մեծ ժառանգութիւնները
միատեսակ վնասակար են թէ՛ պետու-
թեան և թէ՛ ժառանգների համար: Առաջ

են գալիս ահագին կարողութեան տէր մարդիկ, որոնք մի կաթիլ քրտինք անգամ չեն թափել այդ կարողութիւնը ձեռք բերելու համար: Իսկ այդ տեսակ մարդը աւելի շուտ ու աւելի խոր է ընկնում ծայրայեղ հարստութեան ծնունդ այն ապականութեան մէջ, որի մասին վերև խօսեցինք: Ամենակարող փողը շատ անգամ կատարեալ անէծք է դառնում և բախտաւորութեան փոխարէն որդիներին դժբախտութիւն է բերում, սովորեցնելով ծուլութեան և զեղխութեան: » Ժառանգութիւնները յաճախ են արդեօք օգուտ բերում, հարցնում է հեղինակը: Եւ այդ հարցին բացասական պատասխան է տալիս. «Աւելի յաճախ նրանք վնաս են հասցնում, քան թէ օգուտ»: Ուստի և Կերնեշին գալիս է այն եզրակացութեան, որ միլիօնատէր խելացի ծնողները,


եթէ իրենց որդոցը վնասել, թշուառացնել չեն կամենում, եթէ չեն ուզում իրենց խղճի վրայ ծանրացնել հարստութեան անմիտ գործադրութիւնից առաջացող վնասների ու վտանգների պատասխանատւութիւնը, պէտք է իրենց որդոցը չափաւոր բաժին թողնեն, ոչ աղքատ կերպով ապրելու միջոց, իսկ մնացած հարստութիւնը այլապէս գործադրեն:

Երկրորդ միջոցը՝ այսինքն մեռնելու ժամանակ բարի նպատակով փողեր կտակելը, նոյնպէս մեր հեղինակի հաւանութեանը չէ արժանանում: Նախ և առաջ հարստութիւնն այդպէս գործադրելը բարոյական շատ քիչ արժէք ունի: Հարստութիւնը բարի նպատակների համար է գործադրւում այն ժամանակ, երբ հարուստն այլ ևս չի կարող նրանից օգտուիլ: Այդ դէպքում հարուստը տալիս է Աստծուն

այն, ինչ որ իրեն պետք չէ: Մեռեալն
այնքան կարող է իւր հարստութիւնից
օգտուել, որքան քաղաքի փողոցներում
գլխանել: Այդ միջոցի միւս անյարմար
կողմն այն է, որ կտակողը չի կարող ան-
ձամբ հետեւել, որ ճշտիւ կատարուի իւր
ցանկութիւնն ու միտքը, իսկ այդ շատ
անգամ կտակակատարներն էլ չեն հաս-
կանում: Այդ է պատճառը, որ յաճախ
բարի նպատակների համար կտակած հա-
րստութիւնը մնում է իբրեւ արձան կտա-
կողների անմտութեան: Միլիօնատէր
Կերնեջիի կարծիքով իրաւունք էլ չկայ
այդ տեսակ կտակների համար հասարա-
կութեան կողմից յարգանք ու երախտա-
գիտութիւն պահանջել: Եւ այդ հասկա-
նալի է. յարգանքի ու երախտագիտու-
թեան քնն խօսք կարող է լինել, երբ մեջ
տեղ զոհաբերութիւն չկայ: Զոհաբերու-

Թիւն անունը հօ չի կարելի տալ այն
նոյն իսկ խոշոր գումարներին, որ մեռ-
նողը թողնում է հասարակական պետքե-
րի համար: Այդ Կայէնի զոհաբերութիւնն
է. տալիս են Աստծուն այն, ինչ որ պէտք
է դէն գցելին:

Երրորդ միջոցը՝ կենդանի ժամանակ հարստութիւնը բարի նպատակներով գործադրելը, Կերնեջին համարում է միակ խեղացի ու կատարեալ եղանակ: Դա հարստութեան համաշխարհային տնհաւասար բաժանման դէմ իսկակտն հակաթոյն է: Աղքատներին հարուստների հետ հաշտեցնելու միջոցն է դա: Այսպէս գործադրուելով՝ հարստութիւնը հասարակութեան համար բարօրութեան աղբիւր է դառնում: Եւ ժամանակակիցների ու գալոց սերունդների սրտի խորքերում շատ աննման ու քնքշող, զգացմունքներ են



պահուած լինում դէպ աչն հարուստը,
որ կենդանութեան ժամանակ իւր
հարստութիւնը հասարակաց բարօրու-
թեան սեղանի վրայ է դնում՝ որպէս
ջերմեռանդ ու սիրով լի սրտից բոխած
զոհ. դո՛ւ է իսկական զոհաբերութիւնը,
որ բուն յարգանքի և երախտագիտու-
թեան արժանի է դարձնում զոհաբերո-
ղին և նրա իմաստութեան ու փառքի
յաւերժական արձանն է դառնում, ուր
ոսկի տառերով քանդակուած է բանաս-
տեղծի խօսքը.

„Կուգայ օր՝ երկաթ, քար կանհե-
տանան,

„Միայն քարի գործք յաւիտեան
կը մնան*):

*) Գոմառ — Բաթիպա

Կերեջին միլիօնատէր և առհասա-
րակ հարուստ մարդկանց համար հետե-
եալ պարտաւորութիւններն է սահմա-
նում.

Նախ հարուստների պարտաւորու-
թիւնն է կենցաղավարութեան մէջ խու-
սափիլ շռայլութիւնից, համեստ լինիլ և
այդպիսով համեստութեան օրինակ դառ-
նալ. երկրորդ պարտաւոր են իրենց որ-
դոցն ու մերձաւորներին տպահովել՝ չա-
փաւոր կարողութիւն թողնելով նրանց
համար: Կերեջին շեշտում է այդ չափա-
ւոր բառը, որովհետեւ այդ դէպքում մի-
այն հարուստի ժառանգները ծուլութեան
չեն դատապարտուիլ և ստիպուած կըլի-
նին աշխատել, եռանդով առաջ վարել
գոյութեան կռիւը: Երրորդ՝ նրանք պէտք
է իմանան — և այդ գլխաւորն է — որ
իրենց հարստութեան մի նշանատու մասը

անճնական սեպհականութիւն չէ, այլ ժամանակատր կերպով իրենց խնամքին յանձնուած մի ֆոնդ: Նրանք պարտաւոր են այդ գումարը իրենց հասկացողութեան համեմատ գործադրել յօգուտ ժողովրդի ընդհանուր շահերի: Հարստութեան այդ մասին ուրիշ գործադրութիւն տալու իրաւունք չունին նրանք, ըստ որում, ինչպէս ասուեցաւ, այդ մասը նրանց սեպհականութիւնը չէ, այլ ժամանակակորայէս պահ է տուած:

Այժմ իմ ընթերցողի համար բոլորովին պարզ է, թէ ամերիկացի միլիօնատէրը ինչ հայեացք ունի հարուստ մարդու վրայ:—Հարուստը մի տեսակ կառավարիչ կամ խնամակալ է իւր աղքատ եղբայրների վրայ. նա ծառայում է նրանց իւր իմաստութեամբ, փորձով, կառավարչական ընդունակութիւններով:

Այսպիսով հարստութեան իսկական տէրը հասարակութիւնը, ժողովուրդն է: Հարուստն ինքը միայն ժամանակակոր տէր է. նա պետք է համեստ կերպով օգտուի այդ հարստութիւնից և իւր ձեռքովն էլ ծառայեցնի ընդհանուր բարօրութեան օգտին:

Ապա Կերնեջին անցնելով խնդրի գործնական կողմին, ցոյց է տալիս, թէ ինչի վրայ պիտի ծախսուի հարստութեան ժողովրդին պատկանող մասը: Առհասարակ նա հակառակ է անհատների վրայ ծախսելու գաղափարին, այսինքն՝ մուրացկանութեանը, որ մեծ մասամբ ձրիակերութեան վրայ է հիմնուած: Մուրացկանութիւնը պետք է հալածուի. այնտեղ, ուր այդ տարրական միտքը հասկանալի չէ, բարեգործութեան գաղափարն աղաւաղւում է: Փողոցներում ու տներ-

ըում շրջողներին փող տալը հաւասարապէս փչացնում է թէ ստացողին և թէ տուողին: Ստացողը գրկւում է աշխատելու ոյժից ու եռանդից, բարոյապէս ստորանում, ընկնում է. իսկ տուողը խաբում է իրեն և աշխատում է հանգստացնել իւր խիղճը, ցոյց տալով, թէ իբր ինքն արդէն բարեգործութիւն է անում՝ կուպէկներ բաշխելով այս ու այն մուրացկին: Կուպէկներով կատարուող այս իբր թէ բարեգործութիւնն այն վնասակար կողմն էլ ունի, որ խրախուսում է մուրացկանութիւն կոչուած ստոր արհեստը և այդպիսով իսկապէս չարագործութիւն է դառնում:

»Մարդկութեան համար աւելի շահաւետ կլինէր, ասում է Կերնեշին, եթէ միլիոններով հարստութիւններ մինչև իսկ ծովը նետուէին, քան թէ բաշխուէին

անբարոյական, ծոյլ և լաճախ արբեցութեան անձնատուր մարդկանց»:

Հարստութիւնը պէտք է ծախսել, գործադրել հասարակական պէտքերի համար, պէտք է ի նկատի ունենալ հասարակական կարիքներին գոհացումն տալ: Եւ առհասարակ աչքի առաջ պիտի ունենալ հաստատութիւններ և ոչ թէ անձինք: Այս միտքն աւելի սլարգելու համար Կերնեշին մի շարք օրինակներով ցոյց է տալիս, թէ Ամերիկայում հարուստներն աւելի ինչ բաների վրայ են ծախսում իրանց հարստութեան ժողովրդին պատկանող մասը:

Առաջին տեղը բռնում է ձրի հասարակական գրադարաններ հիմնելը: Բարեգործութեան և ընդհանուր շահի տեսակէտից հարստութեան գործադրութեան այս միջոցը խիստ արդիւնաւետ է

Համարում: Այդ դէպքում ամերիկացի
հարուստն ի նկատի ունի ժողովրդի կըր-
թութեան գործը: Գործարաններում, ար-
հեստանոցներում, վաճառատներում և
ուրիշ հազար ու մի տեսակ հաստատու-
թիւններում անթիւ պատանիներ են ծա-
ռայում. դժբախտ հանգամանքների մէջ
հազիւ նրանք կարողացել են գրել—կար-
դալ սովորել: Մանկավարժական խիստ
լաւ հիմունքների վրայ դրուած սկզբնա-
կան դպրոցը գրագիտութեան հետ նրանց
տուել է ուսումը շարունակելու մի ան-
սահման տենչանք: Նրանք ծարաւ են
գիտութեան. և այդ ծարաւը յագեցնելու
համար նրանք գործ են դնում իրենց
ազատ ժամերը, նոյն իսկ բոլէները: Այդ
պատանիների համար ձրի հասարակական
գրադարանի դռներ բանալով՝ հարուստը
մեծ բարեգործութիւն է կատարում: Եւ

ուսումնաճարաւ այդ պատանիներին աւե-
լի մեծ բարիք չի կարելի տալ: Այստեղ
Կերնեջին իւր մանկութիւնն է յիշում.
աղքատութիւնից նա կարողացաւ բար-
ձրանալ և Ամերիկայի եօթանասնից կարգն
անցնել ի միջի ալլոց շնորհիւ մի գրա-
դարանի, որից նա փոքր ժամանակ օգ-
տուում էր: Իւր կրթութեամբ նա ամբող-
ջովին այդ գրադարանին է պարտական:
Մեծամեծ հարստութեանց այդ եղանա-
կով գործադրութեան բազմաթիւ օրինակ-
ներով լիքն է Ամերիկան: Բալտիմորում
Պրատտ անունով մի հարուստ իւր կեն-
դանութեան ժամանակ քաղաքին մի մի-
լիօն դոլլար է նուիրել հասարակական ձրի
գրադարան հիմնելու համար: Տարէնը 37
հազար հոգի այդ գրադարանից հարիւրա-
ւոր գրքեր են տուն տանում կարդալու
համար: Գրադարանը նորերումս իւր ըն-

11
թերցարանի հինգերորդ բաժանմունքն է
բաց արել: Այդպիսի հռչակաւոր գրադա-
րան ունի Բոստոնը. հիմնուած է Զոշուա
Բէտս հարստի միջոցներով: Նշանաւոր
միլիօնատէր Տիլդէնը վերջին ժամանակ-
ներս *հինգ միլիօն* զօլլար է նուիրել՝
Նիւ—Յօրքում հասարակական ձրի գրա-
դարան բաց անելու համար: Նոյն Նիւ—
Յօրք քաղաքում գոյութիւն ունի Կու-
պէրի հռչակաւոր ինստիտուտը. այդտեղ
կայ գրադարան, ընթերցարան, տեղի են
ունենում հանրամատչելի դասախօսու-
թիւններ. և այդ ամենից ժողովուրդն
օգտուում է ձրիաբար:

Բարեգործութեան երկրորդ ասպա-
րէզը *համալսարանն* է: Ամերիկացի հա-
րուստը իւր հարստութիւնը մէջ է բե-
րում կամ նոր համալսարաններ հիմնե-
լու կամ եղած համալսարանների կարի-

քը հոգալու: Ուրեմն այս դէպքում ևս
ի նկատի կայ ժողովրդի կրթութեան և
առհասարակ երկրի ընդհանուր առաջա-
դիմութեան գործը: Պէտք է իմանալ,
որ Ամերիկայում բարձրագոյն դպրոցների
մեծամասնութիւնը մասնաւոր հաստա-
տութիւններ են: Օրինակներ բազմաթիւ
են, յիշենք մի քանիսը: Նորբերումս սե-
նատոր Ստանֆորդի որդին վախճանուե-
ցաւ: Սիրելի որդու յիշատակը յաւերժա-
ցնելու նպատակով նա Կալիֆորնիայում,
Խաղաղական ովկիանոսի ափերում, մի
օրինակելի ու ճոխ համալսարան հիմնեց
երկու սեռի երիտասարդների համար:
Սկզբից նա համալսարանի օգտին նուի-
րեց տասը միլիօն զօլլար և խոստացաւ
երկու այդքան էլ մի ժամանակից յետոյ
նուիրել: Նիւթական կողմից այդպիսի
փառաւոր պայմանների մէջ լինելով,

կարծւում է, որ ժամանակով այդ համալսարանը Ամերիկայի ամենալաւ բարձրագոյն հաստատութիւններից մէկը կը դառնայ:

Բայց հէնց ամենալաւ համալսարանների մեծ մասն էլ միլիօնատէրերի նուիրաբերութիւններովն է հիմնուած և հիմնադիրների անուններովն էլ կոչւում են: Այսպէս միայն Նեշւիլում յայտնի են Հարվարդի, Կոռնէլի, Յէլի, Վանդերբիլդի համալսարանները: Կան մարդիկ, որ չեն կամենում կամ միջոց չունին ամբողջ համալսարան հիմնելու. դրանք կամ արդէն գոյութիւն ունեցող համալսարանի որևէ բաժանմունքին են օգնում և կամ առանձին մասնագիտական դասընթացներ են կազմակերպում: Բալտիմորում Թոուընէլ ամուսինների փոքրիկ որդին մեռաւ: Սգաւոր ծնողներն իրենց վաղամե-

ռիկ որդու յիշատակին մի խոշոր գումար նուիրեցին հայրենի քաղաքին, որպէս զի այդ գումարի տոկոսիքով քանաստեղծութեան դասընթացներ պահուին: Եւ եւրոպական զանազան երկիրներից իւրաքանչիւր տարի հրաւիրւում են գրականութեան պատմութեան լաւագոյն պրօֆէսորները՝ բանաստեղծութեան վերաբերեալ դասախօսութիւններ կարդալու Բալտիմորում՝ ի յիշատակ փոքրիկ Պերսիի: Չափազանց շատ նուիրաբերութիւններ են լինում նոյնպէս յօգուտ դիտարանների: Բարեգործութիւնը նոր դիտարաններ է հիմնում, եղածները ճոխացնում է և առհասարակ աստղագիտութեամբ պարապողներին լաւագոյն յարմարութիւններն ու միջոցներն է տալիս: Նշանաւոր է Լիկի դիտարանը, որ գտնւում է Համիլտոն սարի վրայ: Լիկն այդ դիտարանը հիմնելու

Համար վեց միլիոն դոլլար է նուիրել իւր
ամբողջ կարողութիւնը: Դիտարանը նշա-
նաւոր է իւր հազուադիւտ հեռադիտակով:
Սակայն դրան այժմ գերազանցում է, ինչ-
պէս ասում են, Զիկագոյի մօտ նորերս
կառուցած Զարլս Յերքսի դիտարանը.
այդտեղ աստղագիտական գործիքների
թիւը անհաւատալի քանակութեան է
հասնում: Մի այլ նշանաւոր դիտարան,
Պիտսբուրգում, որ հիմնել է Տօու անունով
մի հարուստ, հնարաւորութիւն տուաւ
պրօֆէսոր Լանգլէին զարմանալի գիւտեր
անելու: Գոյութիւն ունի պրօֆ. Լոմի-
սի Փօնդը. դրա նպատակն է օգնել այն
դիտարաններին, որոնք որ և է կարիք
կունենան:

Երրորդ ասպարէզը, ուր ամերիկացի
փողատէրը խոշոր նուիրաբերութիւններ
է անում, հիւանդանոցներն են. բուժա-

րանները, լաբորատորիաները, առհաւարակ
այնպիսի հաստատութիւններ, որոնց նպա-
տակն է դիւրութիւն և առողջութիւն տալ
հիւանդ մարդկութեանը: Թէ այս ասպա-
րիզում բարեգործութիւնն ինչեր է արել,
երևում է այն փաստից, որ նոյն իսկ հի-
ւանդապահ կանայք պատրաստելու հա-
մար յատուկ ուսումնարան է բացուած:
Ուսումնարանը սլահում է Օսթորն ամե-
րիկացու նուիրած փողով:

Հարստութիւնը խելացի կերպով գոր-
ծադրելու չորրորդ միջոցը հասարակա-
կան ժողովների, համախմբումների եւ
գուարժութիւնների համար տներ շինելն
է: Ժողովրդական ներկայացումների, դո-
սախօսութիւնների, համերգների, երեկոյթ-
ների համար մասնաւոր տներ վարձելը
շատ թանկ է նստում: Այդ հանգաման-
քըն ահա առիթ է լինում, որ շատ տեղ

անկարելի է դառնում կազմակերպել այդ տեսակ խելացի գուարճութիւններ ժողովրդի համար: Այս պատճառով Կերնեջին մեծ բարեգործութիւն է համարում այդպիսի տներ կառուցանել և ժողովրդին նուիրելը: Այդ տեսակ հաստատութիւնները բազմաթիւ են Ամերիկայում:

Հինգերորդ ասպարէզը, ուր բարեգործութիւնն իւր փրկարար դերն է կատարում, հասարակական ծառաստաններն են: Այս նպատակով նուիրաբերութիւններ անելը մեծ ժողովրդականութիւն է վայելում Ամերիկայում: Քաղաքներում ժողովրդի առողջութիւնը միշտ վտանգի է ենթարկուած շնորհիւ վատթար պայմանների. տները իրար վրայ թափուած, բաց տարածութիւնները քիչ, բուսականութիւնը աղքատ: Դրանից տեսակ տեսակ հիւանդութիւններ են առաջանում, հի-

ւանդութիւններ, որ հէնց այդ պայմանների ծնունդ են: Ուստի Ամերիկայի քաղաքներն իրար հետ մրցում են, աշխատելով ազատ հողերը ծառաստաններ ու այգիներ դարձնել. և դրա համար հարուստները խոշոր գումարներ են նուիրում:

Բարեգործութեան համար վեցերորդ ասպարէզ է հասարակական ըստնիքներն եւ լոգարաններ հիմնելը: Ժողովրդի բարեկեցութեան համար դրանց ունեցած ահագին նշանակութիւնը յայտնի է ամենքին, ուստի և աւելորդ են բացատրութիւնները:

Վերջապէս եօթներորդ ասպարէզը նուիրաբերութիւնների համար եկեղեցիներն եւ աղօթատներն կառուցանելն է: Կերնեջին խիստ կրօնական ու ջերմեռանդ մարդ, եկեղեցիներ կառուցանելուն վեր-

ջին տեղն է տալիս, ստիպուած Սմերիկայի ներքին պայմաններից: Այնտեղ ոչ միայն մի համայնքի, այլ նոյն իսկ միևնոյն ընտանիքի մէջ մի քանի կրօններ ու դաւանութիւններ կան: Հետեւեալ այդտեղ եկեղեցի կառուցանելն ընդարձակ հասարակական նշանակութիւն չունի:

Սմերիկացի միլիօնատէրն աւասիկ գործունէութեան ինչ ծրագիր է տալիս իւր եղբայրակիցներին: Սակայն նա բարեգործութեան ասպարէզ մենակ իւր նման միլիօնատէրերին չէ հրուիրում, Ո՛չ. ամեն միմարդ, որ ամենահամեստ կերպով ապրելու ապահովութիւնից դուրս որեւէ բան ունի, պարտաւոր է ընդհանուրի բարօրութեան համար մտածել, այդ աւելլն ամբողջովին նուէր բերելով: Եւ նուիրաբերութիւն պիտի անել ոչ անպատճառ այն ցուցակով, որ տալիս է Կերնեջին:

Սա ինքն իւր տուած ցուցակը կատարեալ չէ համարում. և յայտնում է, որ իւր ցոյց տուած նպատակները դեռ բոլորը չեն, այլ կան և կլինին զարձեւալ շատ ուրիշ կէտեր, ուր փոքր կարելի է գործադրել հասարակաց շահերի համար: Բայց հարստութեան գործադրութեան վերև բացատրուած եղանակն էլ ամեն տեղի համար միակերպ պարտաւորիչ չի կարելի համարել: «Ինքն ըստ ինքեան հասկանալի է, ասում է Կերնեջին, որ զանազան մարդկանց ու տեղերի համար պէտք է տեղի ունենան և նուիրաբերութեան զանազան եղանակներ, այսինքն՝ պէտք է յարմարուել տեղի ու ժամանակի կարիքներին ու պայմաններին»:

Այսպէս ուրեմն Կերնեջին ողորմածութեան կամ հարստութեան գործադրութեան համար այն իդէալական միջո-

ցը չէ առաջարկում, ինչ որ Աւետարանն է պահանջում: Նա չէ ասում, թէ ով երկու շապիկ ունի, մէկը չունեցողին տայ. նոյնպէս չի պահանջում, որ վաղուայ համար հոգացողութիւն չլինի: Ո՛չ. նա գործնական մարդ է. և խնդիրը վճռում է այնպէս, որպէս կարող է գործել ամեն մի մարդ, որ պահպանել է մարդկային (չենք ասում աստուածային) պատկերի նմանութիւնը: Նա հարստին տալիս է համեստ կերպով ապրելու կարողութիւն. նրա ժառանգների համար թողնում է սոված չմնալու միջոց. մնացածը, որ կարող է հարստի համար անբարոյականութեան դուռը բանալ, փչացնել նրան, աղաւաղել նրա մարդկային բնութիւնը, այդ մնացածն ահա նա պահանջում է տալ ժողովրդին: Եւ տալ անպատճառ կենդանի ժամանակ, իւր ձեռքով գործադրել հա-

տարակաց բարօրութեան համար, իւր աչքով հսկել գործադրութեան վրայ: Ռա է իսկական բարեգործութիւնը ըստ Կերնելի. և այդպէս կատարուած բարեգործութիւնն է միայն արժանի ժամանակակիցների ու ապագայ սերունդների երախտագիտութեան զգացմունքին:

III

Երբ Կերնեջիի գիրքը տպագրուում էր Լօնդոնում, Գլադստոնը նրա բովանդակութեանն ծանօթացաւ սրբագրական թերթերից: Իսկոյն մի բաց նամակ գրեց հրատարակչին. նամակի մէջ Մեծ Ծերունին յայտնում էր, որ ինքը կատարելապէս հաւանում է Կերնեջիի ծրագրի գլխաւոր կէտերը և թէ նրա բոլոր ստաների հետ՝ քիչ բացառութեամբ, ըստ ամենայնի համաձայն է: Միևնոյն ժամանակ Գլադստոնը ցանկութիւն էր յայտ-

նում, որ ամերիկացի միլիօնատէրի ալդօրիժինալ աշխատասիրութիւնը տպագրուի մեծ քանակութեամբ և շատ տարածուի, ըստ որում նա կարող է բարի ազդեցութիւն ունենալ: Ի միջի այլոց նա ցանկալի էր համարում, որ Բրիտանիայի իւրաքանչիւր կլուբի գրադարանում Կերնեջիի գիրքը լինի:

Լօնդոնի լօրդ—մէրը գլուխ անցաւ Գլադստոնի միտքն աւելի մեծ չափով իրագործելու համակրելի գործին: Նա մեծ քանակութեամբ ձեռք բերեց Կերնիջիի գիրքը, որ արդէն լոյս էր տեսել „Հարստութեան Աւետարան“ անունով, և ուղարկեց Մեծ Բրիտանիայի բոլոր ընթերցարաններին ու գրադարաններին:

Անգլիական „Nineteenth Century“ ամսագրի 1890 թ. նոյեմբեր գրքում լոյս տեսաւ Մեծ Ծերունու մի այլ բաց նա-

մակը, այս անգամ շատ ընդարձակ: Գլադստոնն այդ նամակին տուել էր «Կերնեջի, Հարստութեան Աւետարան» վերնագիրը: Ինչպէս վերնագիրն արդէն ցոյց է տալիս, նամակը նուիրած էր ամերիկեան հռչակաւոր միլիոնատէրի մտքերի բացատրութեան: Յօդուածի սկսուածքը նպատակ ունի ընթերցողներին ծանօթացնել «Հարստութեան Աւետարան» աշխատութեան հեղինակի անձնաւորութեան և կեանքի հետ: Ապա նա անցնում է այն գրութեան, որ առիթ է եղել Կերնեջիի գաղափարների և նրա գրքի ծագելուն: Պէտք է իմանալ, որ մարդասիրական բարձր սկզբունքների դարուս նշանաւոր պաշտպանը, այդ ջերմ քրիստոնեան՝ միւլենոյն ժամանակ նշանաւոր տնտեսագէտ էր, Եւրոպայի պետական գործիչների մէջ յայտնի տնտեսագէտներից մէկը: Նա մի

քանի անգամ Անգլիայի Ֆինանսների մինիստրի պաշտօնն է վարել. և ամեն անգամ նշանաւոր ծառայութիւններ է մատուցել իւր հայրենիքին: Այգօրինակ բարձր հեղինակութեամբ Գլադստոնն առաջ կանգ է առնում Հարստութեան արագ աճման վրայ: Ժամանակակից առասպելական Հարստութիւնները նա անուանում է «անպատասխանատու Հարստութիւն», որով և ներկան տարբերում է անցեալից. հին աշխարհի Հարստութիւնը հողային եկամուտն էր, որ տալիս էր հողը. սովորութեան ու օրէնքը սահմանել էին որոշ պատասխանատուութիւն, մի տեսակ բարոյական կապ, որն աւատիկ այժմեան հարստի համար գոյութիւն չունի: Այժմեան հարստութիւններն անպատասխանատու են նրանով, որ հասարակութեանը, ժողովրդին ոչինչ օգուտ չեն բերում և գէթ

մի նշանաւոր մասով չեն վերադառնում զէսլ այն ձեռքերը, որոնք աշխատել, յառաջ են բերել նրանց: Գլադստոնի հաշուով Անգլիայի հարստութիւնը իւրաքանչիւր տարի 2000 միլիօն ուուբլով աւելանում է: Իսկ երկրի ամբողջ գրամագլուխն է 120 միլիարդ ուուբլի: Եթէ իւրաքանչիւր տարի աւելանող, նոր բնող 2000 միլիօն ուուբլուց միայն 1300 միլիօնը բարի գործերի համար ծախսուի, «այն ժամանակ, ասում է Գլադստոնը, Մեծ Բրիտանիայի ամբողջ երեսն ու արտաքինը կփոխուէր, և աղքատութիւնն, այդ ամօթալի բիծը, կանհետանար»: Եւ այդպիսի մի մեծ գործ կատարելուց յետոյ՝ զեռ իւրաքանչիւր տարի 700 միլիօն ուուբլի կմնար, որ ամբողջովին բարդուելով մալր գրամագլխի վրայ՝ հարստութեանց աւելի մեծ չափով աճելու գործին կծառայէր:

Գալով զրքի էական մասի բովանդակութեանը, նա քայլ առ քայլ հետեւում է Կերնեջիին, իւր կողմից նորանոր օրինակներ ու պատկերներ է աւելացնում. գլխաւոր կէտերում Կերնեջիի մտքերից ոչինչ չէ հերքում: Առանձնապէս երկար խօսում է հարստութեանց գործադրութեան Կերնեջիի ցոյց տուած երեք տեսակի վրայ:

Առաջինը որդիներին ժառանգութիւն թողնելու հարցն է: Գլադստոնն այստեղ համաձայն չէ Կերնեջիին: Նա նախ պաշտպանում է անդրանկութեան իրաւունքը. ցոյց է տալիս, որ Անգլիայում այդ իրաւունքը շատ նշանաւոր պետական մարդիկ է տուելի զէմս ժառանգական արիստոկրատների: Ապա նա ցանկալի չէ համարում, որ հարուստը իւր ամբողջ հարստութիւնը գործադրէ բարի

նպատակով: Գլադստոնն ընդունելով հարստութեանց մեծ նշանակութիւնը առևտրական և արդիւնաբերական ձեռնարկութիւնների մէջ, ուզում է, որ հասարակական բարօրութեան համար հարուստըն իւր դանձից մի նշանաւոր բաժին հանելով, իւր կամ իւր ժառանգների համար այնքան փող թողնի, որ ոտքի վրայ կանգնեցրած գործը շարունակուի: Ուրիշ խօսքով՝ հարուստն իւր հարստութիւնը ժողովրդին տալով, պէտք է միևնոյն ժամանակ մտածէ ու աշխատէ, որ չընդհատուի իւր առևտրական կամ արդիւնագործական ձեռնարկութիւնը, այսինքն այն գործը, որի միջոցով հարստութիւն է ձեռք բերել:

Կտակով՝ մեռնելուց յետոյ բարի գործերի համար հարստութիւն թողնելուն Գլադստոնը հակառակ է: Այս խնդրում

նա ըստ ամենայնի միանում է Կերնեշիի հետ, այլ և նրա միտքը աւելի է զարգացնում:

Նուիրաբերութեան գաղափարի հետ սերտ կերպով կապուած է անձնագրկման գաղափարը: Նա, որ փող է կտակում իւր մահից յետոյ բարի գործերի վրայ ծախսելու, իսկապէս իրան ոչնչից չի զրկում: Եւ ինչպէս կարող է դա բարեգործութիւն կոչուիլ: «Մահն արդէն խել է մեզանից մեր հարստութիւնը, ասում է Մեծ Ծերունին. հետևաբար մենք անձամբ չենք կարող օգտուիլ նրանից, ինչպէս և չենք կարող զբօսնել Բոնդ-Ստրիտում կամ Հայդ-Պարկում: Ապա ուրեմն ինչ առաքինութիւն է ամփոփում այն բարիքների նուիրաբերութեան մէջ, որոնցից շահուելը վեր է ամենայն հնարաւորութիւնից»:

Նուիրաբերութեան այս տեսակն իսկապէս կեղծ կամ երևութական առաքինութիւն է, որ շատ անգամ նոյն իսկ վատթար հետեանքներ է ունենում: Տեսնում էք հարուստ, որ ագահ է, ժլատ, որի ձեռները կծկուած են ամեն մի բարի գործի հանդէպ, որ անտարբերութեամբ անցնում է թշուառի լացի ու տանջանքի մօտից: Եւ այս գարշ կեանքը քարշ է տրւում նրա համար, որ մահից յետոյ համաձայն կտակի բարի գործեր պիտի կատարուին:

Վերջապէս կենդանի ժամանակ բարեգործութիւն անելով, մարդ հնարաւորութիւն ունի հետեւել իւր հարստութեան գործողութեան ընթացքին, լսել հասարակական կարծիքը, չնախատեսած պակասը լրացնել, մի խօսքով անձամբ տեսնել իւր հոգեգաւտիին:

Ինչպէս տեսաւ ընթերցողը, Կերնեջին հարստութեանց գործադրելու միակ խելացի միջոցն է համարում կենդանութեան ժամանակ անձամբ բարեգործութիւն անելը: Գլադստոնն ըստ ամենայնի համաձայն է Կերնեջիի այդ մտքի հետ:

Ի վերջոյ «Մեծ Ծերուհին» յայտնում է, որ այդ յօդուածը գրելով իւր նպատակն էր աւելի ընդարձակ կերպով տարածել Կերնեջիի գաղափարները: Նա հաւատացած է, որ հարուստների մեծամասնութիւնը հեգնութեամբ կվերաբերուին իրենց ամերիկացի եղբայրակցի ծրագրին: Բայց և այնպէս եթէ այդ ամերիկացու ցանած սերմը մէկին վաթսուհ կամ մէկին հարիւր չտայ, գոնէ մէկին երեսուհ կտայ: Այսպէս է հաւատացած մեծ մարդը: Խնդիրը լուրճ է և վերաբերում է ամենքին: Ուստի և հարուստը կամա-

ւոր նուիրաբերութեամբ, եթէ այդ չլինի՝
պետական օրէնսդրութեամբ, հարկերի
միջոցով, պէտք է պարտաւորուին իրենց
հարստութեանց մի մասը ժողովրդին վե-
րադարձնել: Այժմեան հարուստներն, ա-
սում է Գլադստոնը, շնորհիւ հարկերի
տիրապետող կարգերի՝ աւելի քիչ հարկ են
վճարում, քան նրանց նախորդները սրա-
նից 600 կամ 800 տարի առաջ: Անգլի-
այում հարկային ծանրութեան աւելի
քան կէսը չքաւորների վրայ է ընկնում:
Իսկ հարուստների եկամտի տասնութէկ
տասներկուերորդը ազատ է հարկից:

Ասլա Գլադստոնն լիշում է լօրք
Կարլէյլի և Մորպետի «Ընդհանուր մար-
դասիրական դաշնակցութիւն» հիմնելու
փորձը: Դրա նպատակը պիտի լինէր եկա-
մտի կամուրը նշանակած մասը բարե-
գործերի վրայ բանեցնել: Խօսելով այդ

դաշնակցութեան մասին, Գլադստոնն բա-
ցատրում է, որ նա սահմանափակ բնա-
ւորութիւն ունէր. ընկերութեանը կարող
էին անդամակցել միայն բողոքականները,
նպատակ ունենալով հասարակութեան
մէջ մարդասիրութեան ոգին բարձրացնել:
Մասնակցողներից իւրաքանչիւրը հանդի-
սաւոր կերպով ազնիւ խօսք էր տալիս իւր
ընկերներին, որ իւր կարողութեան մի
մասը բաժին կհանէ աղքատների համար:
Յետոյ արդէն նրա պատուի և խղճի գոր-
ծընէր՝ յանձն առած պարտաւորութիւնը
կատարել: Աւասիկ հէնց այդպիսի մի ըն-
կերութիւն ցանկալի է այժմ, բայց սոռանց
սահմանափակումների: Թող այդպիսի ըն-
կերութեան անդամ դառնայ ամեն մի
մարդ, որ տողորուած է Կերնեջիի գա-
ղափարներով և կամ համաձայն է, թէ
իւր կարողութեան մի մասը պէտք է բա-

րի գործերի յատկացնի: Այդ դէպքում ստի-
պողական ոչինչ չպէտք է լինի: Ամեն
մէկը «ինքն է իւր խղճի հետ հաշիւ տես-
նում», ասում է Գլադստոնը. այսինքն
ամեն մարդ ինքն է վճռում, թէ նուի-
րաբերութիւն անելը և թէ նուիրաբերու-
թեան չափը:

Ընկերութեան նսլատակը պէտք է
լինի.

1) Զարթեցնել այն մարդկանց խիղ-
ճը, որոնց մէջ սա քնած է.

2) Որտեղ բարի ձգտումներ կան բա-
րելաւել ու լաւագոյն ուղղութիւնը տալ.

3) Նմանելու արժանի օրինակներ
տալ նրանց, որոնք արդէն բարիք են գոր-
ծում.

4) Փոխադարձ օգնութեան սկզբուն-
քի վրայ հիմնուած ընկերութիւնների
միջոցով մասնաւոր մարդկանց ջանքերն

ուժեղացնել:

Մեր օրերումը շաղկապութեան և ան-
հաշիւ տնտեսութեան, արհամարում են
յաճախ այնպիսի համակրելի յատկութիւն-
ներ, որպիսիք են խնայութիւնն ու կա-
նոնաւոր տնտեսութիւնը: Կարծես մար-
դիկ յանցանք են գործում, որ իրենց ու-
նեցածը անհաշիւ կերպով դէս ու դէն
չեն շարտում: Գլադստոնը հաւատացած
է, որ եթէ իւր առաջարկած ընկերու-
թիւնը կազմուի, բարեմիտ մարդկանց
աչքում խնայութիւնն այլ ևս յարձակում-
ների ու ծաղրի նիւթ չի դառնալ, մարդ-
կային բնութեան համակրելի գծերից
մինը կհամարուի:

Կարծում եմ, որ իմ ընթերցողը
Գլադստոնի խնայութիւնը չի շփոթիլ
ժլատութեան հետ:

IV

Ինչպէս և պէտք էր սպասել, Մեծ
Ծերունու յօդուածն ընդհանուրի ուշա-
դրութիւնը գրաւեց: Անգլիայի բոլոր ան-
կիւններում նա խօսակցութեան առարկայ
դարձաւ: Առանձին ուշադրութեան ար-
ժանի են բաց նամակի ձևով գրուած երեք
յօդուած, որոնց հեղինակ հանդիսանում
էին տարբեր դաւանութեանց հետևող
երեք բարձրաստիճան հոգևորականներ:
Պրանց յօդուածները տպուած են նոյն
„Nineteenth Century,, հանդիսի հէնց հե-
տևեալ զրքում և կրում են «Անսլատաս-

խանատու հարստութիւններ» ընդհանուր
վերնագիրը:

Նամակների մէջ առաջին տեղը բռն-
նում է յայտնի գիտնական կարգինալ կա-
թոլիկ արքեպիսկոպոս Հենրի Էդուարդ
Մաննինգի ընդարձակ նամակը: Մաննին-
գը նախ երկար կանգ է առնում «անսլա-
տասխանատու հարստութիւններ» գաղա-
փարի Գլադստոնի որոշման վրայ: Անսլա-
տասխանատու հարստութիւն ասելով
հասկացում է մի բան, որ չի ծախսւում,
որինն ո՛չ օրէնքն է ձեռք տալիս, ո՛չ էլ
օրէնքի ներկայացուցիչը, որը կարծես ծա-
ծուկ ընկած՝ պահւում է: Իսկապէս ան-
սլատասխանատու է հարստութեան սեպ-
հականատէրը և ո՛չ հարստութիւնը: Յա-
մենայն դէպս բոլորովին ցանկալի չէ այդ
տեսակ հարստութեան մեծանալը, որով-
հետև նա ո՛չ մի նոր բան չի աւելացնում

մարդկային երջանկութեան ու բարօրութեան վրայ: Որքան էլ երկրի շահերի համար օգտակար համարուի այդպիսի հարստութեանց աճումը, չպէտք է սակայն աչք գոցել այն թշուառ դրութեան հանդէպ, որի մէջ գտնուում է բանուորը: Հետզհետէ աւելանում է թէ՛ դրանց թիւը և թէ՛ տանջող թշուառութիւնը: Եւ երկրագնդի վրայ գտնուող երկիրներէից ամենահարուստն այսօր իւր մէջ երեք միլիօն աղքատ մարդ ունի... Եւ այսօր այդ բանը ո՞վ պէտք է իմանայ, եթէ ոչ ֆինանսների մինիստրներից մեծագոյնը և մարդկանցից ամենամեծահոգին՝ Գլադստոնը: Ի նկատի առնելով Գլադստոնի բերած թուերը, թէ Անգլիայի դրամագլուխը 120 միլիարդ ուոլբի է և թէ իւրաքանչիւր տարի դրա վրայ աւելանում է 2000 միլիօն ուոլբի, արքեպիսկոպոսը կրկնում է

Գլադստոնի միտքը, թէ այդ գումարով կարելի է հրաշալի կերպով կերպարանափոխել երկրի կերպարանքը և ոչնչացնել աղքատութիւնը: Ո՞ւր են սակայն միջոցներ մի այդպիսի յեղափոխութեան համար: Ո՞րտեղ է բանալին:

Սաննինգի կարծիքով օրէնսդրութեամբ այդտեղ ոչինչ չի կարելի անել: Ոչինչ չի լինիլ օրէնքների լաւագոյն գործադրութեամբ: Քաղաքական տնտեսութիւնն էլ ապիկար է այստեղ որ և է գոհացուցիչ գործ կատարելու: Պրութիւնը կարող է փոխուիլ միայն այն ժամանակ, երբ անհատն աշխատի աւելի լաւ, աւելի կատարեալ լինել. երբ տոգորուած կլինի անձնազոհութեան գաղափարով. և երբ վերջապէս՝ անհատների այգօրինակ բարոյապէս բարձրացման շնորհիւ՝ կբարձրանայ հասարակութեան մէջ բարեգործու-

Թեան և առաքինութեան ոգին:

Կերնեջիի գիրքը և Գլադստոնի յօգուածը խոշոր նշանակութիւն ունեցող հրաւէր են, բացատրում է արքեպիսկոպոսը, որ ուղղուած են հարուստներին և վերաբերում են հարստութեան գործադրութեան խնդրին: Այս հաղորդելով այդ հրաւէրների բովանդակութիւնը՝ Մանինգը՝ կատարելապէս համաձայն Կերնեջիի հետ՝ հերքում է հարստութեանց գործադրութեան առաջին երկու միջոցը, այսինքն՝ որդոց ժառանգութիւն թողնելը և կտակով մահից յետոյ բարի գործերի նուիրելը: Եւ լիովին ընդունում է ամերիկեան միլիօնատերի այն կարծիքը, թէ մարդ իւր կենդանութեան ժամանակ պէտք է հարստութիւնը գործադրէ հասարակական ընդհանուր բարօրութեան համար: «Այդ կատարելապէս համաձայն

է քրիստոնէական վարդապետութեան ոգուն, աւելացնում է Մանինգը. և եթէ մարդիկ այսպէս վարուէին, այն ժամանակ աշխարհիս կերպարանքը կփոխուէր:

Գիտնական կարգինալը նոյնքան համակրանքով է վերաբերում Գլադստոնի առաջարկին, թէ հարկաւոր է ընդհանուր մարդասիրական դաշնակցութիւն կազմել: Այդ մի տեսակ ինքնագոհութեան սոսկետութիւն կլինէր: Բայց այդ տեսակ հրաւէրների ու առաջարկների հետ Մանինգն անհրաժեշտ է համարում և եռանդուն գործունէութիւն, որին պէտք է գործակցեն ու համակրութիւն յայտենն հասարակութեան լաւագոյն անդամները:

Վերջապէս թուելով հարստութեանց սակաւաթիւ ձեռներում կենտրոնանալու վատթար հետևանքները, Մանինգը՝ իբրեւ անգլիացի հայրենասէր, երկիւղ է յայտ-

նում, թէ այդ անբնական սւ վնասակար երևոյթը կարող է երկրի կործանման պատճառ լինել և ոչ մի բան չէ կարող փրկել այդ տեսակ վախճանից: Միակ միջոցն է քրիստոնէական կրօնի խորհրդներին և բարու ձայնին դիմել, այդպէս է եզրափակում իւր խօսքը կարդինալը:

«Անպատասխանատու հարստութիւններ» վերնագրի տակ գրուած նամակների մէջ երկրորդ տեղը բռնում է Լօնդոնի գլխաւոր ռաբբի Ադլէրի նամակը, մի կարճ, բաց շատ խելացի գրուածք: Հաղորդելով Կերնեշիի գրքի և Գլադստոնի յօդուածի գլխաւոր կէտերը՝ Ադլէրը յայտնում է, թէ այդտեղ իսկապէս նոր բան չկայ, այլ միայն կրկնուած է Աստուածաշնչից վաղուց յայտնի ճշմարտութիւնը: Ս. գիրքը պատուիրում է սեպհականութեան տասներորդ մասը բարի գործերի վրայ

ծախսել: Մովսիսի օրէնքով թէ խաշնարածի և թէ երկրագործի արդիւնքի տասներորդը պէտք է յետ դրուի սուրբ գործերի համար:

Յիշելով Ս. գրքի այդօրինակ պահանջները՝ Ադլէրն ասում է, թէ դրանք երբեմն հրէաների մէջ խստութեամբ պահպանուել և երբեմն էլ մոռացութեան են տրուել: Այժմ էլ հրէաներն իրենց եկամտի տասանորդը բարեգործութեան են յատկացնում: Ինքն Ադլէրը ճանաչում է իւր հաւատակիցների մէջ շատ մարդիկ, որոնք ամենաճիշտ կերպով կատարում են այդ պարտականութիւնը և բարեգործութեան համար արած ծախքերի մասին նոյնքան կանոնաւոր հաշուեմատեաններ են պահում, որքան իրանց առևտրական գործերի համար:

Գալով ապա Կերնեշիի ու Գլադստոնի

մտքերին ու ծրագրին, Ադլէրը հաստատում է, թէ որքո՞նք և դրո՞նք հի՛ն դաս են տալիս, բայց այդ դասն ըստ ամենայնի յարմար է և մեր ժամանակներին ու պայմանների համար:

„Երբէք, ասում է Ադլէրը, աւելի մեծ կարիք չի եղել հարստութեան պարտաւորութիւնները և աղքատութեան իրաւունքները քարոզելու, ինչպէս հէնց ներկայումս: Հարստութեան և աղքատութեան միջի անդունդն երբէք այնքան մեծ չի եղել, ինչպէս այժմ է:“

Յարգելի ռաբբին իւր նամակը վերջացնում է ջերմ ցանկութիւն յայտնելով, որ Անգլիայի հարուստներին ուղղած Գլադստոնի կոչը կատարեալ յաջողութեամբ պսակուի:

Վերջին նամակի հեղինակն է յայտնի բողոքական քահանայ Հիւզ Պրայս

Հիւզ: Սա յայտնում է, որ Գլադստոնը մեծ ծառայութիւն է մատուցել հասարակութեանը, ընդհանուրի ուշադրութիւնը հրաւիրելով այն էտիքական հետեանքների վրայ, որ ունենում է հարստութեան աճումը: Սօցիալական խնդիրը միւս բոլոր խնդիրներից աւելի կարևոր է, ասում է աւետարանի պաշտօնեան: Նա յիշաւ խնդիրների խնդիրն է: Գլադստոնն իւր յօդուածով դիմում է հարուստներին և առաջարկում է նրանց այդ խնդրով պարապել: Համակրելով այդ քայլը, Հիւզը չի ընդունում սակայն այն ձևը, որով Կերնեջին ու Գլադստոնը խնդիրը հասարակութեան առջև են դնում: Ժամանակակից տնտեսական դրութիւնը նա համարում է անբնական, հակաքրիստոնէական, հրեշաւոր և քաղաքանապէս վտանգ սպառնող երևոյթ: Բուն քրիստո-

նէական երկրում, ասում է բողոքական քահանան, այս միլիոններն ու նրանց գոյութիւնը հնարաւոր չէին լինի, որովհետեւ քրիստոնեաներին արգելուած է երկրիս վրայ գանձ գիգել: Կերնեջին մտածում է, թէ ինչ միջոց տայ հարուստներին գործադրելու իրենց հարստութիւնը կամ ազատութիւնը նրանից: Հիւզի կարծիքով աւելի կարեւոր է մտածել, թէ ինչ պէտք է անել, որ հարստութեանց զիգումն ու սակաւաթիւ ձեռքերում կենտրոնանալն անհնարին դառնայ:

Տեսնելով սակայն, որ իւր առաջարկած խմորը մեծ ջուր կտանէ, Հիւզն անցնում է Գլադստոնի յօդուածին և յայտնում է, որ եթէ նրան յաջողուի Անգլիայի և Միացեալ Նահանգների հարուստներին ընդունել տալ Կերնեջիի աւետարանի սկզբունքները, ապա Մեծ Ծերու-

նին իւր գործունէութիւնը պսակած կըլինի մի վեհագոյն բարեգործութեամբ՝ յօգուտ ընդհանուր մարդկութեան: Ընդունել Կերնեջիի մտքերն ու իրագործել նրա առաջարկը՝ այդ Հիւզի կարծիքով՝ կնշանակէ սօցիալական հեթանոսութիւնից սօցիալական քրիստոնէութեան դառնալ:

Գալով Գլադստոնի մարդասիրական դաշնակցութիւն կազմելու առաջարկին, Հիւզը երկիւղ է յայտնում, թէ մի գուցէ հարուստն իւր գանձից մի չնչին՝ օրինակ տասներորդ մաս հանելով բարի գործերի համար, հանգիստ կերպով ձեռքը սրտին դնէ ու իւր խղճի հետ քնէ: Այդ պատճառով բողոքական այդ արմատական քահանայի աչքում կարեւորը նոյն չէ համարւում, թէ հարուստը ո՞րքան է գործ դնում բարեգործութեան ասպարիզում, այլ այն, թէ ո՞րքան է լետ դնում իւր անձի համար:

Ի վերջոյ խոստանալով ամեն կերպ աջակցել, որպէս զի Գլադստոնի մարդասիրական դաշնակցութեան ծրագիրն իրագործուի, Հիւզը յայտնում է, որ յաջողութեան կարելի է սպասել՝ քացառապէս Հիմնուելով քրիստոնէութեան քարոզի վրայ։

Երեք դաւանութեանց այդ ներկայացուցիչների մտքերն եթէ ուղենանք ամփոփել, կտեսնենք, որ կաթոլիկ կարդինալն ու հրէից ռաբբին ըստ ամենայնի համաձայն են Կերնեջիի և Գլադստոնի մտքերին. իսկ երրորդը՝ բողոքական քահանան շատ աւելի է պահանջում, քան նրանք են առաջարկում։ Սա ուզում է հասնել մի այնպիսի դրութեան, որ կարելի չլինի սակաւաթիւ մարդկանց համար հարստութիւն ձեռք բերել. ուզում է, որ կեանքն այնպէս բարեփոխուի, աւելին ասենք, որ կեանքն այն տեսակ

արմատական կերպարանափոխութեան ենթարկուի, որ հարստութեան ու աղքատութեան դրացիութիւնը անհնարին դառնայ, ուրիշ խօսքով, որ էլ հարուստ ու աղքատ չլինին։

Ըստ երևույթին բողոքական այդ խիզախ քահանան ուղղակի՝ քրիստոնէական իդէալն է քարոզում։ Հարկաւ՝ եթէ մարդիկ վաղուան համար չմտածեն, եթէ տուն կառուցանեն, շոր հագնեն միայն իրանց անձը տաքից ու ցրտից, անձրևից ու ձիւնից պաշտպանելու համար, եթէ ուտեն ու խմեն իրանց մարմնի պարզ պահանջին գոհացում տալու նպատակով միայն... այն ժամանակ հարուստ ու աղքատ չեն լինիլ։ Երկիրն ամենքին կտայ այն, ինչ որ անհրաժեշտ է։ Սակայն տեսնելով, որ դա ուտուպիա է, յարգելի հոգևոր հայրը ցանկութիւն է յայտնում, որ գոնէ Կերնեջիի ու Գլադստոնի մտքերն իրագործուին։

Վ

Պրօֆ. Եանժուլն իւր կողմից բարեգործութեան մի գեղեցիկ օրինակ է բերում, որ թէպէտ Կերնեջի մտքերի հետեւանք չէ, բայց կրում է նրա ոգու կնիքը: Խօսքը վերաբերում է մի քանի տարի առաջ Գերմանիայի Դրեզդէն քաղաքում հիմնուած Գեհէի Խնստիտուտին: Փրանց Լիւդվիգ Գեհէն ղեռ մանուկ օրերից վաճառականութեան էր ձգտում: Տասնուչորս տարեկան՝ նա ծառայութեան մտաւ մի յալտնի ղեղադործարան, ուր

աշակերտեց տասը տարի: Ապա ցանկացաւ սեպհական առևտուրն ունենալ և բաց արաւ մի ընդարձակ գեղավաճառանոց: Շնորհիւ իւր եռանդի ու տոկունութեան՝ Գեհէն ութսնական թուականնեքին արդէն քաղաքի յալտնի հարուստներից մէկն էր: Մի քանի անգամ ժողովրդական ընտրութեամբ նա պաշտօններ է վարել թէ քաղաքային խորհրդարանում և թէ ռայխստագում: Բազմամեայ գործունէութեան ընթացքում Գեհէն նկատեց, որ իւր զասակարգի մարդիկը՝ առևտրականները իրանց լուսաւորութեամբ և հասարակական ու պետական խնդիրների հասկացողութեամբ շատ ցաւալի պատկեր են կազմում: Եւ ահա նա իւր հարստութեան մեծագոյն մասը նուիրեց քաղաքացիների կրթութեան գործին: Հիմնուեցաւ Գեհէի անունով մի

ինստիտուտ, որի համար նա տուեց քաղաքին երկու միլիօն մարք:

Ինստիտուտի նպատակն է, նախ ժողովրդի մէջ տարածել այնպիսի գիտութիւններ, որոնք անհրաժեշտ են հասարակական գործունէութեան համար. երկրորդ՝ նիւթապէս նպաստել այն մարդկանց, որոնք հասարակութեան բարօրութեան համար որ և է նշանաւոր ծառայութիւն են արել:

Առաջին նպատակին հասնելու համար ընթերցարան և գրադարան են հիմնել, և դասախօսութիւններ ու գործնական վարժութիւններ են լինում. թէ գրքերի և թէ դասախօսութիւնների բովանդակութիւն կազմում են հասարակական գիտութիւնները: Երեքն էլ՝ թէ ընթերցարանը, թէ գրադարանը և թէ դասախօսութիւնների գործը պատկառելի հիմ-

նարկութիւններ են: Ժողովուրդը նրանցից օգտուում է ձրեաբար. նոյն իսկ գրքեր տուն տանելու համար գրաւական չի պահանջուում:

Ըստ վերջին տեղեկագրի՝ ընթերցարանը 164 պարբերական հրատարակութիւն է ստանում, որոնք ըստ բովանդակութեան դասակարգուած են զանազան սեղանների վրայ: Բացի դրանից ստացւում են նոր լոյս տեսնող գրքոյկները, որպէս զի ընթերցարանի յաճախորդները հնարաւորութիւն ունենան հասարակական գիտութիւններին ու խնդիրներին վերաբերեալ ընթացիկ գրականութեան հետեւել: Հաշուի առած տարուայ ընթացքում ընթերցարանը 21368 յաճախորդ է ունեցել:

Նոյն տարում ընդարձակ գրադարանից գիրք են վերցրել 2,188 հոգի. տուն

է տարուած 17,338 գիրք: Գրադարանի հարստութեան մի նշանաւոր ասպնոցն այն է, որ նրանից օգտուողներէ մէջ առաջին տեղը բռնում են գիտնականներն ու գրողները:

Նոյնքան գեղեցիկ հիմունքների վրայ գրուած են դասախօսութիւնները: Բացի նրանից, որինստիտուտը մշտական դասախօսներ ունի, ամեն տարի էլ հրաւիրւում են Գերմանիայի, Աւստրիայի ու Շվեյցարիայի նշանաւոր պրօֆեսորները՝ հասարակագիտութեան զանազան ճիւղերից դասախօսելու:

Այդ դասախօսութիւններն այնպիսի հիմունքների վրայ են գրուած և այնպէս լաւ են տարւում, որ իսկապէս մի ֆակուլտէտի նմանութիւն ունին, ֆակուլտէտ՝ նուիրուած հասարակական գիտութիւնների տարածման և ժողովրդա-

կանացման: „Կասկած չկայ, ասում է Եանժուլը, որ այս հաստատութիւնը մարդասիրական տեսակէտից հարստութեան գործադրութեան չափազանց օգտակար միջոցներից մէկն է: Կարելի է միայն աւելացնել, որ եթէ Գերմանիան իրօք կարիք է զգում հասարակական գիտութիւնները տարածելու, ապա նոյն պահանջը աւելի մեծ չափով իւրաքանչիւր քաղաքում զգացւում է և շատ ուրիշ երկիրներում. ուստի դրանցից իւրաքանչիւրն էլ պէտք է անհամբերութեամբ սպասէ իւր Գեհէի երևալուն...

VI

Հայ ազգը որպէս կուլտուրական հին ժողովուրդ, որ բարոյական ու նիւթական բարձրագոյն դրութեան ու երջանկութեան հասնելու զօրաւոր ձգտումներ է ցոյց տուել դեռ այն խաւար դարերում, երբ այսօրուայ քաղաքակիրթ ազգերից շատերը պատմութեան բեմը չէին իջել, վաղուց հասկացել է հարստութեան պարտաւորութիւնները: Հայոց մեծագործ Հայրապետներից մէկը՝ Ներսէս Մեծը՝ ձրգտում էր այդ պարտաւորութիւնների կա-

տարումն այն տեղն հասցնել, որ երկրի մէջ ամեն մի աղքատ, ամեն մի կարօտեալ լիովին բաւականութիւն ստանան: Նա որոշել էր Հայաստան աշխարհը դարձնել մի աւետարանական համայնք, մի մարդասիրական ընդարձակ ընկերութիւն, որի իւրաքանչիւր անդամը զիտէ, թէ ինչ պարտք կայ իւր վրայ դրուած դէպի մերձաւորը և կատարում է այդ պարտքը: Իւր մարդասիրական լայն ծրագիրն իրագործելու համար՝ 365 թուին Աշտիշատ քաղաքում ազգային մեծ ժողով գումարեց, ուր ներկայ էին Հայոց Արշակ Բ. թագաւորը, նշանաւոր իշխաններն ու եպիսկոպոսները: Հետաքրքիր են այդ ժողովի որոշումները՝

Բարձր դասակարգի մէջ սովորութիւն էր մերձաւոր ազգականներն մէջ պսակ կատարել: Այդ անուամբ էր այն նպատակով, որ տոհմական հարստութիւնը

տոհմի մէջ էլ կենտրոնացած մնայ և ուրիշ
ձեռքեր չանցնի: Ժողովը Ներսիսի առա-
ջարկութեամբ խափանեց այդ սովորու-
թիւնը, արգելելով մերձաւորների պսակը:

Որոշուեցաւ Հայաստան աշխարհի
ամեն մի գաւառի բարեխառն տեղերում
ուրկանոցներ շինել բորոտների համար,
հիւանդանոցներ՝ աղքատ հիւանդների և
անկեղանոցներ՝ կուրերի, կաղերի և ուրիշ
այդպիսիների համար:

Երկրի մէջ աղքատների որբերն ու
այրիներն անխնամ մնալով՝ փչանում էին:
Դրանից առաջ էին գալիս գողութիւն,
անառակութիւն և ուրիշ տեսակ տեսակ
անկարգութիւններ ու ախտեր: Ներսէս
Մեծն այդ ցաւին զարման անելու նպա-
տակով՝ հրամայեց որբանոցներ և այրիա-
նոցներ հիմնել:

Ճանապարհորդները գիւղերում կամ

քաղաքներում ծանօթ չունենալով՝ աս-
պընջականութիւն չէին գտնում ու մնում
էին բացօթեայ: Դրանից ևս զանազան չա-
րիքներ էին ծագում: Սահմանուեցաւ իւ-
րաքանչիւր գիւղում ու քաղաքում հիւ-
րանոցներ հիմնել, ուր ճանապարհորդ-
ները կարողանային օթեանել:

Որոշուեցաւ նոյնպէս բազմաթիւ
վանքեր կառուցանել, ճանապարհորդնե-
րին օթեան ու հաց տալու և շրջակայ-
քում ուսումն և գիտութիւն տարածելու
նպատակով:

Ներսէսը թագաւորի ու ժողովի հա-
ւանութիւնն ստանալով՝ սկսեց գործի
անցնել, իւր մտքերն իրագործել: Բոլոր
հաստատութիւնների գոյութիւնը նա
ապահովեց մշտական հասոյթներով: Պատ-
միչն տսում է, թէ նա իւր անձին եր-
բէք հանգիստ չէր տալիս. շրջում էր

գիւղերն ու քաղաքները, այցելում էր նորատուռնի հաստատութիւնները: Համարձակ կերպով մտնում էր իշխանների պալատները և նրանց դրդում էր բարեգործութիւն անել և աղքատութեան դէմ մաքառել:

Եթէ ի նկատի առնենք, որ ներկայիս քաղաքակիթ ու հարուստ ազգերն էլ իրանց հայրենիքի ամեն մի գաւառում չեն կարող վերոյիշեալ մարդասիրական հաստատութիւնները ցոյց տալ, ապա հասկանալի կլինի, թէ առաքինութեան ու բարեգործութեան ոգին որքան զարգացած էր նախնի հայոց մէջ: Ուշադրութեան արժանի է, որ Մեծն Ներսէսը՝ ինչպէս մեր օրերում Գլադստոնն ու Կերնեջին, չէ համակրում ողորմութիւն տալու, անհատ աղքատների կոպէկներ բաշխելու միտքը: Չճմարիտ է, ժողովը

մեզ հասած որոշումների մէջ անհատներին ողորմութիւն տալու դէմ ոչինչ չկայ, բայց զրա փոխարէն այդ տեսակ բարեգործութեան դէմ է խօսում որոշումների ընդհանրութիւնը: Հարստութիւնը գործադրելու ասպարէզ ընտրուած են հաստատութիւններ՝ ուրկանոցներ, անկեղանոցներ, որբանոցներ, այրիանոցներ, հիւրանոցներ, վանքեր. անհատների մասին խօսք չկայ: Աղքատը եթէ առողջ է, գործ կարող է գտնել. եթէ հիւանդ է, չպէտք է մուրացկանութիւն անէ, այլ պէտք է իւր ծննդավայրի անկեղանոցը մտնէ և այնտեղ սնունդ ու խնամք ստանայ:

Պէտք է կարծել, որ այդ Մեծ Հայրապետին կյաջողուէր Հայաստան աշխարհըն իսպառ կերպարանափոխել և աղքատութիւնը վերացնել. սակայն քաղաքական փոթորիկները, որ շուտով բարձրա-

ցրին Յոյներն ու Պարսիկները, տակն ու վրայ արին Հայաստանի խաղաղութիւնը և շատ բարեքների հետ՝ Հայոց հանճարի ստեղծած այդ գեղեցիկ ծաղիկը՝ մարդասիրական մեծ գործն ևս ոտքի տակ տուին, փչացրին: Այդ փոթորիկները մեր աշխարհից երբէք չպակասեցան. ուստի և այդտեղ բարեգործական նշանաւոր հաստատութիւնները տւական կեանք չունեցան: Անշուշտ լաւ յայտնի է ամենքին, որ «ամենախաղաղ մարդն էլ չէ կարող հանգիստ կեանք վարել, եթէ այդ ցանկալի չէ չար հարեանին»:

Բարեգործութեան զարգացման համար ևս անհրաժեշտ է, որ երկիրը կառավարւում լինի հաստատուն օրէնքներով և որ այդ օրէնքները պարտաւոր լինին թէ իշխանի և թէ յետին սինլքորի համար: Եթէ որևէ երկրում օրէնքի

տեղ հաճութիւն է տիրում, եթէ օրէնսդիրն ինքը իւր դրած օրէնքը յարգելու պարտաւորութիւնից ազատ է և օրինակութիւն ասած բանը չի ճանաչում, ապա պէտք է խղճալ այդ երկրին ու երբէք չսպասել, թէ այնտեղ որ և է առաջադիմութիւն կլինի: Բայց ներողութիւն, ես սխալուեցայ. առաջադիմութիւն կլինի, ինչո՞ւ չէ. կեղտի, ցեխի, ապականութեան, բռնութեան, խաւարի առաջադիմութիւն, . . .

Հայաստան աշխարհում երկար դարերի ընթացքում օրինականութիւն ասած բանը չի եղել: Թէ յօյն, թէ պարսիկ, թէ արաբ, թէ թաթար առաջնորդուել են միայն իրենց քմահաճութիւնով: Բարեգործական ամենագեղեցիկ հաստատութիւնը չէր կարող նմանը կառուցանելու նախանձ ու ցանկութիւն զրգուել, որովհետեւ մի գեղեցիկ օր մի որ և է անամօթ ու դարձ

ոստիկան կարող էր քարուքանդ անել
Հաստատութիւնը և նրա գոյութիւնը
պաշտպանելու համար կտակած հարըս-
տութիւնը իրեն սեպհականել: Այդ է
պատճառը, որ Մեծն Ներսիսի ցանաժ
ազնիւ սերմերը, ինչպէս և շատ ուրիշ
բարի սերմեր, խեղդուել, փչացել են:

Բարեգործութեան ասպարէզ մնացին
եկեղեցին ու վանքը, որոնք այնքան մեծ
կուլտուրական դեր են կատարել Հայաս-
տան երկրում:

Բայց թողնենք անցեալը, հարեանցի
միայն նկատելով, որ վերջին դարերում
գաղթական հայերը բարեգործութեան ա-
ւելի բարձր ոգի էին ցոյց տալիս: Հարըս-
տութեանց գործադրութեան նշանաւոր
օրինակ պիտի հանդիսանաւ Հնդկաստանի
հայ հարուստներից մէկի ծրագիրը: Դա
իւր խոշոր հարստութիւնն ամբողջովին

Ռուսաց Եկատերինա II կայսրուհուն էր
առաջարկում, որպէս զի այդ փողով մահ-
մեդական բռնակալներից գնէ Հայաստանը
և այդպէս ազատութիւն շնորհէ նահա-
տակ երկրին:

VII

Մեր օրերին գանք: Անշուշտ ըստ ամենայնի ցանկալի է, որ Կերնեջիի աւետարանն ու Գլադստոնի առաջարկը մեզնում ևս տարածուին ու հարուստներին գործի դրդեն: Մեր մէջ ևս թշուառութիւնը սարսափելի չափեր է ընդունել: Անասելի աղքատութիւն տիրում է ամեն տեղ. հացի կարօտ ահագին բազմութիւն կայ, և-չենք ամաչում փաստն արձանագրել, քանի որ հասարակութիւնն էլ չի ամաչում այդ փաստին լոկ անտարբեր

հանդիսատես լինել—այդ բազմութեան մէջ կան շատերը, որոնք գիշեր ու ցերեկ աշխատել, չարչարուել, տանջուել են, իրանց ներկան ու ապական, իրանց ամբողջ կեանքն են զոհ բերել հասարակական բարձրագոյն շահերի համար: Բայց աւելի ծանր է մտաւոր աղքատութիւնը: Եթէ մեր հասարակութեանց անտարբերութիւնը շարունակուի, մի քանի տարուց յետոյ Կովկասում թիւրքերից անգամ հայերը գրագիտութեան կողմից լետ կմնան: Բայց ո՞վ գիտէ, գուցէ այժմ իսկ լետ են: Այսպէս ուրեմն կայ մտքի ու հացի սոսկալի աղքատութիւն: Հետեւապէս հարըստութիւնը մեծամեծ պարտաւորութիւններ ունի կատարելու, որ մինչև այսօր անուշադիր է թողել: Թերևս առարկեն, թէ մեզանում հօ Ամերիկայի միլիոնները չկան: Ղարթ է, Ամերիկայի մի-

լիօնները չկան. բայց և այնպէս մեղանում էլ կան մեր «անպատասխանատու հարստութիւնները», որոնք ընկած են սակաւաթիւ մարդկանց քով և հասարակական ոչինչ պարտաւորութիւն չեն կատարում: Մեղանում կան մեր միլիօնները, հարիւր հազարները, տասնեակ հազարները, նոյն իսկ հազարները: Եւ դրանցից իւրաքանչիւրը իւր պարտքն ունի դէպի հասարակաց բարին:

Սակայն ինչպէս և ինչ ասպարէզներում պէտք է կատարուի այդ պարտքը:

Դրա պատասխանն ամփոփւում է Կերենշիլի տուած ծրագրի մէջ, որին արդէն ծանօթ է ընթերցողը: Բայց չպէտք է մոռանալ մի բան: Հարստութեանց գործադրութեան մասին կազմած ամենակատարեալ ծրագիրն անգամ չի կարող պարտաւորական համարուիլ ամեն մի տեղի ու

ժամանակի համար: Պայմանների տարբերութիւնը առաջ է բերում և ծրագրի տարբերութիւն:

Այսպէս Կերենշիլի առաջին պահանջն է, որ հարուստը բարեգործութիւն անելիս՝ ի նկատի ունենայ հաստատութիւններ և ոչ թէ անհատներ: Պարզենք այդ կէտը: Հարուստը մի մի աղքատի նոյն իսկ մշտական ողորմութիւն տալով ոչինչ բարիք չէ հասցնում ժողովրդին: Նա պարտաւոր է հիմնել աղքատանոցներ, որպէս զի աղքատը մուրացկանութեան նման մի ստոր ու ստորացնող արհեստ թողնէ և մշտապէս աղքատանոցում սնունդ ու խնամք գտնէ: Եթէ միջոցները չեն ներում մի ամբողջ աղքատանոց բաց անել, այդ դէպքում նա կարող է իւր փողը արդէն գոյութիւն ունեցող աղքատանոցներից մէկին նուիրել և այդպիսով հնարա-

ւորութիւն տալ, որ աւելի մեծ թուով
աղքատներ սննդուին ու խնամուին: Յա-
մենայն դէպս՝ երբէք մուրացկտնութիւնը
չպէտք է խրախուսել:

Ուրիշ օրինակ. երբ հարուստը տես-
նում է, որ բազմաթիւ երեխայք ու պա-
տանիք կան, որոնք ուսումն առնելու մի-
ջոց չունենալով՝ փչանում են փողոցնե-
րում ու հասարակ ծառայութեան մէջ,
պէտք է իւր հարստութիւնը նուիրէ այն-
պիսի դպրոց հիմնելու, ուր երեխայքը
ձրիաբար ուսումն, կամ գրա հետ ի միա-
սին և ուրիշ կարիքների բաւականութիւն
ստանան:

Սկզբունքով սա մի հրաշալի պահանջ
է: Բայց մեզ մօտ անհնարին է խստիւ
հետևել այդ սկզբունքին: Ամերիկայում
մարդասիրական, ժողովրդի նիւթական ու
բարոյական կարիքներին զոհացումն տա-

լու նպատակով հիմնուած հաստատու-
թիւնները բազմաթիւ են: Նոր գգա-
ցող կարիքների համար կարելի է ան-
միջապէս, առանց բիւրոկրատիական լա-
բիւրինթոսներ ընկնելու, հիմնել նոր հաս-
տատութիւններ. բաւական է միայն, որ
կայ բարի ցանկութիւն և միջոց: Մեզա-
նում սակայն այդ հնարաւոր չէ: (Փակա-
զըծում լիշենք, որ Տաճկաստանի հայերը
մեր խօսքի առարկայ խնդրում կարող են
աւելի խիստ կերպով հետևել Կերնեջիի
սկզբունքին:) Իմ միտքը աւելորդ չեմ հա-
մարում հաստատել մի երկու օրինակնե-
րով:

Բաֆֆու «Կայծերը» տպագրութեան
համար պատրաստ էին դեռ 1877 թուին:
Հեղինակը, ինչպէս երևում է նրա մառ-
նաւոր նամակից, հէնց այդ ժամանակ էլ
ցանկանում էր տպագրել, ուստի առա-

ջարկել էր Գրիգոր Արծրունուն հրատարակել և իբրև պրեմիա՝ տալ «Մշակի» բաժանորդներին: Ռաֆֆու ցանկութիւնը անկատար մնաց: «Կայծերը» հեղինակի մօտ ընկած մնացին հինգ—վեց տարի: Եւ երեւի դեռ երկար փոշիների մէջ կը մնային, եթէ գնդապետ Ա. Մելիք-Հայկազեանը չհոգար տպագրութեան ծախքը:

Միհրդատ Սմերիկեանը, «Մշակի» տաղանդաւոր աշխատակիցը և Հայոց բեմի շնորհալի դերասանը՝ թոքախտից հիւանդանալով՝ անխնամ ու անտէր լինելուց՝ գրեթէ փողոցում մեռաւ:

Մի քանի ասրի առաջ երբ պ. Աղայեանը հիւանդ էր ու նեղ դրութեան մէջ, հրապարակով, բոլոր նուիրատուների անուններն անմահացնելով, գրեթէ կոպէկ կոպէկ մի քանի հարիւր ռուբլի ժողովեցին: Եւ դուրս չեկաւ մէկը, մի հարուստ, որ հայ

գրականութեան ու հայ գրագէտների պատիւը պաշտպանելու համար գոնէ՝ մի համաստ գումարով ապահովէր բազմաշխատ հեղինակի և մանկավարժի ծերութեան օրերը: Հարկաւոր է արդեօք ասել, որ եթէ պ. Աղայեանի հէնց միայն «Սնահիտ»ն ու «Արեգնազան»ը Սմերիկայում կամ Եւրոպական որ և է ալ երկրում մի հեղինակ գրած լինէր, ապահոված կըլինէր իրեն էլ, իւր ժառանգներին էլ:

Որքան պարբերական հրատարակութիւններ են խափանուել նիւթական սղութեան պատճառով:

Կարծում եմ այս քանը բաւական է, որպէս զի ընթերցողը համոզուի, թէ մեզնում ցանկալի չէ Կերնեջիի լիշեալ սկըզբունքով ընթանալը, թէ անհրաժեշտ է, որ մեր ունեւորները լուրջ կերպով ի նկատի ունենան և անհատ մարդկանց, որոնց

կեանքն ու գործունէութիւնը հասարակական նշանակութիւն ունի:

Դանք այժմ հարստութեանց գործադրութեան Կերնեջիի ցոյց տուած երեք միջոցներն.

Որդոց ժառանգութիւն թողնելը ցանկալի է այն ձևով, որ ցոյց է տալիս Գլադստոնը: Եթէ հարուստը գործարան ունի կամ որևէ առևտրական, գիւղատնտեսական հաստատութիւն, նա չպէտք է դրանց գոյութիւնը դադարեցնէ. այլ եղած հարստութիւնը ժողովրդական շահերին նուիրելով, պարտաւոր է գործն անխափան որդոցը թողնել՝ շարունակելու: Այս պահանջը աւելի կարևոր է մեր երկրում, որ տնտեսական զարգացման սկզբնական քայլերն է անում:

Իսկ եթէ արգիւնաբերական—առևտրական հաստատութիւն չկայ, ապա ցան-

կալի է, որ հարուստը իւր որդոց համար շատ համեստ ապրելու միայն միջոց թողնէ: Սեպհական աշխատանքն ևս աւելացնելու կարիքը որդոցն աւելի երջանիկ կդարձնէ:

Երկրորդ միջոցը՝ որ է կտակով հարստութիւն թողնելը՝ մահուանից յետոյ բարի նպատակով գործադրելու համար, մեզանում բաւական ընդհանրացած է և հայ ժողովրդի հնազոյն առաքինական սովորոյթներից մէկն է: Սակայն պէտք է Կերնեջիի և Գլադստոնի հետ խոստովանենք, որ այդ սովորոյթի մէջ իսկական առաքինութիւն չկայ: Սխալ է միթէ, որ այդ դէպքում հարուստը ժողովրդին է տալիս այն, ինչ որ իրեն այլ ևս պէտք չէ և կարգադրութիւն է անում ու իշխանութիւն է բանեցնում այնտեղ, ուր այլ ևս իրաւունք չունի, որովհետեւ մեռնում

է ու չէ կարող իւր հարստութիւնից օգտուիլ:

Մեր հասարակութիւնը յաճախ առիթ է ունեցել տեսնելու, որ կտակով թողած հարստութիւնը շատ անգամ կտակողի անմտութեան արձանն է դարձել: Պօլսեցի յայտնի միլիօնատէր Գարագէօզեանի կտակը անվերջ բանակցութեանց ու կռուի առարկայ է դարձել ժառանգներին և ազգի միջև: Ժառանգները չեն ցանկանում հօր կտակը սրբութեամբ կատարել. ազգն էլ չի ուզում կտակով իրեն թողած հարստութիւնից ձեռք քաշել: Եւ կզըտնուի՞ արդեօք մի մարդ, որ ազգին մեծ գումար կտակած հանգուցեալ Գարագէօզեան էֆէնդու անունն օրհնութեամբ ու երախտագիտութեամբ լիջի: Քանի որ կարող էր իւր հարստութիւնից օգտուել, իւր ոսկու կոյտերին նայել և հիանալ, նա

չիշեց ազգի կարիքները. բայց երբ որ մահը նրանից խլեց այդ գանձից օգտուելու, նրանով հիանալու կարողութիւնը, այն ժամանակ մեր խելօք հարստականը ազգին դարձաւ ու ասաց, «Այս հարստութիւնն այլ ևս ինչ պէտք չէ, ան, թող քեզ լինի»:

Առանց մարգարէ լինելու կարելի է գուշակել, որ այսօր այդ կտակը չիրագործելու համար գլուխ պատռող ժառանգները վաղը՝ երբ մահուան ճանկը կրնկնին, իրենց հօր պէս ազգի կարիքները կլիշեն ու կտակով որ և է գումար կլթողեն...

Դէհ այժմ եկէք ու այդ մարդկանցը բարեգործ անուանեցէք, եկէք ու դէպի դրանց յիշատակը յարգանք ու երախտագիտութիւն պահանջեցէք: Հնարաւոր է դա...

Հարստութեան խելացի գործադրութեան միակ միջոցն այն է, որ Հարուստն իւր կենդանութեան ժամանակ իւր իսկ ձեռքով, իւր հսկողութեամբ ժողովրդի շահերի համար գործադրէ իւր ունեցածը: Դա է խելական առաքինութիւնը:

Կերնեջիի տուած ցուցակը չափազանց նուրբ անիւներ ունի. և սրտնք մեծ մասով կփշրուին մեր երկրի դարուփոսերի, արահետների ու ժայռերի վրայ: Պէտք է մեր սլամանների ու կարիքների համապատասխան ցուցակ կազմել: Եւ կարիքը մեզնում ևս այնքան բարձր է աղաղակում, որ Հարստի կողմից միայն բարի ցանկութիւն, միայն ազնիւ տրամադրութիւն է հարկաւոր, և նա կգգալ, թէ ո՞րտեղ պէտք է Հարստութիւնը գործադրել:

Ո՞վ չէ զգում ժողովրդական դպրոցների անհրաժեշտ կարիքը: Դպրոցական

վարչութեան հետ համաձայնութիւն կայացնելով՝ պէտք է մեր քաղաքներում ու գիւղերում հիմնել տարրական դպրոցներ թէ տղայոց և թէ օրիորդաց համար: Ներկայումս ցանկալի է հիմնել այնպիսի դպրոցներ, որոնց տիպին են պատկանում Ռազում թուրքաց „Русско-татарская“, կոչուած տարրական դպրոցները:

Ահա բարեգործութեան ընդարձակ ասպարէզ:


Դպրոցը մեզ կտայ ընթերցող հասարակութիւն, որ ընթերցանութեան գրքերի մշտական կարիքը կունենայ: Այստեղ բարեգործութիւնն իւր խորին ուշադրութիւնը պիտի դարձնէ գրականութեան զարգացման վրայ: Պէտք է ապահովել, ապրելու միջոց տալ նրանց, այն գրական մշակներին, որոնք ցոյց են տուել, թէ իրենց ճակատին աստուածային մատի

դրոշմը կայ, որոնք ցոյց են տուել, թէ
իրենք չիրաւի օգտակար են դրականու-
թեան:

Մեր եկեղեցին, մեր ազգային այդպանծալի ընդհանուր սեպհականութիւնը, որ այդպէս լինելով՝ մեզ համար նոյն նշանակութիւնն ունի, ինչ որ Ֆրանսիացու համար իւր հայրենիքը, բարեգարդութեան մեծամեծ կարիքներ ունի: Լաւ հոգեւորականներ պատրաստել, մշտական երգեցիկ խմբեր կազմել և առհասարակ աշխատել, որ եկեղեցին ժողովրդի համար միշտ սիրելի մնայ, որ կենդանի պահէ ի սփիւռս աշխարհի ցրուած որդիների հետ կապը, ահա՛ բարեգործութեան ընդարձակ ասպարէզ:

Այլ ժողովրդի աղքատ, հիւանդ մասի համար անհրաժեշտ կարիք կայ աղքատանոցներ, հիւանդանոցներ հիմնելու...

Բայց բաւականանա՛նք. երբ հարուստը կարողանայ բարոյապէս այնքան բարձրանալ, որ Կերնեջիի հետ համաձայնի, թէ ինքը իւր հարստութեամբ հոգաբարձու, խնամակալ է աղքատ դասակարգին, որ հարստութիւնն իսկապէս ժողովրդինն է, երբ, կրկնում ենք, հարուստը կարողացաւ այդ բարձրութեան վրայ կանգնել, այն ժամանակ նա կլսի, թէ ո՞րտեղից է հառուչ բարձրանում, և այնտեղ էլ օգնութեան կհասնի իւր հարստութեամբ:



Վ Ր Ի Պ Ա Կ.

10-րդ երես, 3-րդ տող ներքևից. պէտք է
կարգալ՝ „Self-made man,“ նն կոչում:

41-րդ երես 4-րդ տող ներքևից. տպուած
է լսալ, պէտք է կարգալ՝ սլարտը:

1870

10-12-1870. 10-12-1870. 10-12-1870.
10-12-1870. 10-12-1870. 10-12-1870.
10-12-1870. 10-12-1870. 10-12-1870.
10-12-1870. 10-12-1870. 10-12-1870.

40 *හිටිගැහැණු.*

12540

2013

«Ազգային գրադարան»



NL0046063

